ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Մեղրի համայնք, Զորավար Անդրանիկ 2
հեռ. (0286)4 34 23 էլ-հասցե՝ meghri.syuniq@mta.gov.am

Թիվ 517
05 ՄԱՅԻՍԻ 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Կից Ձեզ է ներկայացվում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 4-ի N42-Ա, N43-Ա, N44-Ա, N45-Ա, N46-Ա, N47-Ա, N48-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Կատ.՝ Լ. Մեժլումյան

ՍՏԻՑ № 1679
«10» 05 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N42 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 4-ի N9 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

3.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում նախատեսվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթային կարգով տրամադրելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերը (մարդատար ավտոմեքենաներ) կրկնաաճուրդով օտարելու մասին:

6.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N43 -Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելուն, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի Կարճևան գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների կատեգորիայի 1,35542 հեկտար հողամասը (սեփականության իրավունքի վկայական N29032017-09-0003, ծածկագիր՝ 09-051-0424-0006) փոխադրել գյուղատնտեսական հողամասերի կատեգորիա «բազմամյա տնկարկներ» գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4 ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N44 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 77-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մեժլումյան փողոցում գտնվող՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված 09-005-0068-0011 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,00765 հա բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի հետ կապված անճշտության ուղղման նպատակով:
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մեժլումյան փողոցում գտնվող՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված 09-005-0068-0015 ծածկագրով 0,0062 հա գյուղատնտեսական վարելահող նշանակության հողամասը, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի հետ կապված անճշտության ուղղման նպատակով:
3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկ փողոցում գտնվող՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված 09-005-0042-0065 կադաստրային ծածկագրով 0,00055 հա բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի հետ կապված անճշտության ուղղման նպատակով:

4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N45 –Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Տալ համաձայնություն ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելուն, ըստ որի նախատեսվում է Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի վարչական սահմաններում գտվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N20042017-09-0019), 09-005-0709-0127 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական այլ հողատեսքեր նշանակության 4,3135 հա հողամասը փոխադրել (համաձայն՝ «Վերտեքս» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա «կոմունալ ենթակառուցվածքների հողեր» գործառնական նշանակությամբ՝ Մեղրի քաղաքի աղբավայրի շահագործման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ :

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N46 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ և 76-81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 39-Ն որոշումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Ադելյան փողոցի թիվ 11/11 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողերից 0,00448 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0040-0027, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N15042015-09-0020) տրամադրել 10 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով մրցույթային կարգով՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, տարեկան վարձավճարի մեկնարկային չափ սահմանելով 4480 (չորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N47 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԸ (ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ) ԿՐԿՆԱԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող 2008 թվականի արտադրության VAZ 21214-130-20 մակնիշի 058 LL 70 պետհամարանիշի ավտոմեքենան բաց դասական կրկնաաճուրդ – վաճառքով՝ կրկնաաճուրդի մեկնարկային գին սահմանելով 1 120 000 (մեկ միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (գինն ըստ « ԱԼՏԱՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2016 թվականին տրված ավտոմեքենայի շուկայական գնահատման թիվ ՇԳՀ/06/101 հաշվետվությամբ սահմանված 1400000 դրամից իջեցվել է 20%) :

1) կրկնաաճուրդը չկայանալու դեպքում ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում անցկացնել հերթական աճուրդ և յուրաքանչյուր կրկնաաճուրդ անցկացնելիս վաճառվող գույքի նախնական գինն իջեցնել 20 տոկոսով:

2.Օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող 2007 թվականի արտադրության HOVER 2.4 մակնիշի 059 LL 70 պետ. համարանիշի ավտոմեքենան բաց դասական կրկնաաճուրդ – վաճառքով՝կրկնաաճուրդի ՝ մեկնարկային գին սահմանելով 1 422 000 (մեկ միլիոն չորս հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ (գինն ըստ « ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից 07.12.2016 թվականին տրված ավտոմեքենայի շուկայական գնահատման ՆԳՀ/080/16 հաշվետվությամբ սահմանված 1580000 դրամից իջեցվել է 10 %) :

1) կրկնաաճուրդը չկայանալու դեպքում ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում անցկացնել հերթական աճուրդ և յուրաքանչյուր կրկնաաճուրդ անցկացնելիս վաճառվող գույքի նախնական գինն իջեցնել 10 տոկոսով:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել կրկնաաճուրդները:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ _____
ՉԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ _____
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ _____
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ _____
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվական N48 –Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,

1)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի:

2)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 2-ի:

3)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (10)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. մայիսի 4
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 4-ի N48-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7+u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-8000.0	0.0	-8000.0
2424	4	2	4	Ոռոգում	8000.0	0.0	8000.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 4-ի N48-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսագիտական դասակարգման հոդված	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		-8000.0	0.0	-8000.0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	-8000.0	0.0	-8000.0
2424	4	2	4	Ոռոգում		8000.0	0.0	8000.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	8000.0	0,0	8000.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		0.0	0.0	0.0
				- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	323.0	323.0	x
				- Պահուստային միջոցներ (վարչական բյ.)	4891	-323.0	-323.0	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ